ՎԱԽԻՑ ՄԻՆՉև ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ՅՈԲ 3.25-26

25 *Որովհետև այն երկյուղալի բանից, որ շատ վախենում էի, ինձ պատահեց, և ինչից որ սարսափում էի, ինձ հասավ:* ***26*** *Ո՛չ խաղաղություն ունեմ, ո՛չ հանգստություն, ո՛չ էլ հանդարտություն. վրդովումն է եկել:*

- *Անցյալ Կիրակի մենք տեսանք, որ* ***վախը պարզապես զգացմունք չէ, այլ հոգևոր զենք****, որը սատանան օգտագործում է մարդուն Աստծուց հեռացնելու համար:*

  Այսօր ուզում տեսնենք, թե ինչ է տեղի ունենում, երբ վախը մնում է չլուծված:

  Չլուծված վախը երբեք միայն վախ չի մնում:

  Այն անցնում է երեք փուլերով.

  Վախ → Բարկություն → Աննողամտություն

  Ծննդոց 4:5-6 – Կայենը շատ բարկացավ և երեսը կախեց: Տերը Կայենին ասաց. Ինչո՞ւ ես բարկացել և ինչո՞ւ ես երեսդ կախել:

  Սա Աստվածաշնչում ***«բարկություն» (חרה – charah)*** *բառի առաջին հիշատակումն է: Եբրայերեն חָרָה (charah) բառը բառացի նշանակում է «բորբոքվել», «այրել», «բոցավառվել»:*

Այսինքն՝ բարկությունը ներկայացվում է որպես մի կրակ, որը սկսում է այրել մարդու ներսը:

Ինչո՞ւ բարկացավ Կայենը

Կայենի բարկության խորքում կային.

մերժված լինելու վախ, ինքնարժեքը կորցնելու վախ, համեմատության վախ, վերահսկողությունը կորցնելու զգացումը:

«Ադամ Որտե՞ղ ես... վախենում եմ» (Ծննդոց 3.9)

«Կայեն Ինչո՞ւ ես բարկացել» (Ծննդոց 4.6)

I. ՎԱԽԸ ԲԱՑՈՒՄ Է ԴՈՒՌԸ ԴԻՎԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԴԻՄԱՑ

Հետաքրքիր է, որ Հոբը առաջին յոթ օրերի ընթացքում ոչ մի խոսք չասաց:

Հոբ 2.13 – Յոթ օր և յոթ գիշեր ոչ ոք խոսք չասաց նրան...

Նա լուռ էր: Նա լսում էր: Նա ցավի մեջ էր:

Հետո առաջին անգամ խոսեց... և առաջին խոսքերը լի էին ցավով, վախով և հուսահատությամբ:

Հակոբոս 1.19 – Իմացե՛ք, իմ սիրելի՛ եղբայրներ, թող ամեն մարդ արագահաս լինի լսելու մեջ, ծանրաշարժ՝ խոսելու և բարկանալու մեջ.

II. ՉԼՈՒԾՎԱԾ ՎԱԽԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոբ 3:26 – Ո՛չ խաղաղություն ունեմ, ո՛չ հանգստություն, ո՛չ էլ հանդարտություն. վրդովումն է եկել:

Եբրայերեն רגז (ragaz) – ներքին ցնցում, խռովություն, բարկության պայթյուն

Վախը ներսում երկար մնալուց հետո սկսում է փոխել մարդու արձագանքը:

ՀԻՇԵՔ. Բարկությունը երկրորդային զգացմունք է: Շատ դեպքերում դրա արմատը վախն է:

Վիրավորանք, վերահսկողության կորուստ

Եփ. 4:26–27 – Եթե բարկանաք, մի՛ մեղանչեք թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի... և տեղ մի՛ տվեք սատանային:

Պողոսը չի ասում, որ բարկությունը միշտ մեղք է: Բայց եթե այն չլուծվի, այն դառնում է սատանայի մուտքի դուռ:

III.ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Հովնան 4 – Հովնանը բարկացավ Աստծո վրա:

Ինչո՞ւ. Որովհետև նրա սրտի խորքում վախ կար:

Նա վախենում էր, որ Նինվեն կապաշխարի:

Նա վախենում էր, որ իր մարգարեությունը սխալ կհամարեն:

Նա կորցրեց իր վերահսկողությունը և վախը վերածվեց բարկության:

Նա նույնիսկ ասաց. «Ավելի լավ է մեռնեմ...»

Աստված հպվեց նրա սրտին և ասաց. «Արդյոք ճիշտ է, որ բարկանում ես»:

- ***Սավուղ թագավորը***

Ա Թագավորաց 18 – Սավուղը սկզբում վախեցավ Դավթից:

Ինչո՞ւ. «Որովհետև Տերը Դավթի հետ էր...»

Հետո այդ վախը դարձավ խանդ, Հետո բարկություն և Հետո սպանության փորձ:

Սավուղի ամբողջ կյանքը դարձավ Դավթին հետապնդելու մոլուցք: Մի մարդու չլուծված վախը կործանեց ամբողջ թագավորությունը:

IV.ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ

Եթե բարկությունը չի հանձնվում Աստծուն, այն կարծրանում է: Այդ կարծրացած բարկությունը կոչվում է ***աննեռողամտություն****:*

Եբրայեցիներին 12.15 – Զգո՛ւյշ եղեք՝ որևէ մեկն Աստծու շնորհից չզրկվի. դառնության արմատ թող չաճի ու ոչ ոքի թող նեղություն չտա...

Ուշադրություն դարձրեք. Աստված չի ասում «դառնության պտուղ»

Նա ասում է արմատ: Արմատը միշտ թաքնված է:

ԻՆՉՈՒ Է ՍԱՏԱՆԱՆ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ՄԵՆՔ ՉՆԵՐԵՆՔ

- *Որովհետև աննողամտությունը կապում է մեզ անցյալի հետ, փակում է աղոթքը, խլում է խաղաղությունը:*

Մատթեոս 18-ի – Անգութ ծառայի առակում Հիսուսն ասում է.

նա հանձնվեց տանջողներին, քանի դեռ չներեց:

ՀԻՇԵՔ. աննողամտությունը մարդուն հոգևոր տանջանքի մեջ է պահում:

26 Ո՛չ խաղաղություն ունեմ, ո՛չ հանգստություն, ո՛չ էլ հանդարտություն. վրդովումն է եկել:

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ

1. Ճանաչիր վախի արմատը

Հարցրու. «Ի՞նչ եմ ես իրականում վախենում կորցնել»:

Սուրբ Հոգին միշտ գնում է արմատին:

2. Ներիր, նույնիսկ եթե ցավը դեռ կա

Ներելը չի նշանակում մոռանալ, կամ արդարացնել կատարվածը:

Ներելը նշանակում է. դատը հանձնել Աստծուն:

Հռ. 12:19 – «Վրեժխնդիր մի՛ եղեք...»

- ***Հովսեփը մարդկային ցավ ապրեց***

Նրան. եղբայրները ատեցին, ցանկացան սպանել, վաճառեցին ստրկության, տարիներ շարունակ բաժանեցին հորից, Պետափրեսի կինը սուտ մեղադրեց, բանտում մոռացվեց (Ծննդոց 40:23):

Եթե որևէ մեկը մարդկային տեսանկյունից պատճառ ուներ բարկանալու, դա Հովսեփն էր: Սակայն Աստվածաշունչը երբեք չի նկարագրում նրան որպես վրեժով կամ դառնությամբ ապրող մարդ:

- ***Հովսեփը դատը հանձնեց Աստծուն***

Ծն. 50:19–21 – Մի՛ վախեցեք, որովհետև միթե ես Աստծու տեղն եմ: Դուք իմ դեմ չար մտածեցիք, բայց Աստված այն բարու վերածեց...

- ***Հովսեփը չմոռացավ, բայց ներեց***

Շատերը կարծում են, թե ներելը նշանակում է մոռանալ:

Հովսեփը չմոռացավ: Նա հիշում էր.

Վաճառվելը, փոսը, ստրկությունը, բանտը:

Բայց նա այլևս այդ հիշողություններով չէր ապրում:

Դրա համար էլ կարողացավ ասել.

«Աստված ինձ մոռացնել տվեց իմ բոլոր նեղությունները...» (Ծննդոց 41:51)

Սա չի նշանակում, որ Հովսեփը կորցրել էր հիշողությունը: Նա նկատի ուներ, որ ***Աստված բուժել էր հիշողության ցավը****:*

3. ՀԻՇԵՔ Հիսուսը՝ կատարյալ օրինակը

Գեթսեմանիում Հիսուսն ապրեց մարդկային ամենամեծ ճնշումը:

«Իմ անձը մահու չափ տրտում է»:

Բայց Նա չբարկացավ, չդառնացավ, չատեց:

Այլ Խաչի վրա ասաց. «Հայր, ների՛ր նրանց...» (Ղուկ. 23.34)

Նույն օրինակին հետևեցին Առաքյալները. Գործք 2-ից սկսած առաքյալների ուշադրությունը կենտրոնացած է ոչ թե Հուդայի, այլ ***Քրիստոսի*** *վրա:*

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: